

ԹԱՏՐԵՐԳԱԿԱՆ

ԳԷՕՑ ՖՈՆ ԲԵՐԼԻՇԻՆ ԳՐՆ

Ե Ր Կ Ա Թ Ա Բ Ա Զ Ո Ւ Կ

Գրեց՝ ԳԷՕԹԷ

ԹԵԳԻՆՆԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(Շար. տես Բազմավեպ 1931, էջ 363)

Բաւերերգի եպիսկոպոսական պարատին մէջ

Ճաշարարհը

Բաւերերգի եպիսկոպոս, Ֆուլյայի վանահայրը, Օլեարիոս, Լիբերտաւոս, Պալատականներ սեղանի վրայ։ Գիշերասեղանը և մեծ բաժակները կը վերցուցին։

Եպիսկոպոս. — Կերկայիս Պուլոնի համալսարանին մէջ շատ գերմաններ կ'ուսանին։

Օլեարիոս. — Ազնուական և քաղաքացի, ամէն դասակարգէ կան. և առանց պարծենկոտութեան ըսենք որ իրենք են ամէնէն կարկառուն դէմքերը։ Ակադեմիային մէջ որպէս առած կ'ըսեն. « Այնքան աշխատասէր որքան գերման ազնուական մը »։ Որովհետեւ եթէ քաղաքացիները գովելի ջանքեր կ'ընեն իրենց տաղանդով շահելու իրենց ազգատոհմին խեղճութիւնը, միւսները նուազ ջանք չեն թափեր վեր հանելու համար իրենց տոհմին հըռչակը՝ գիտութեան և արժանիքի փայլով։

Վանահայր. — Ո՛հ, ո՛հ։

Լիբերտաւոս. — Եւ յետոյ թող զան ըսեն թէ՛ Զիք ինչ նոր ընդ արեգակամբ։ Այնքան աշխատասէր որքան ազնուական գերման մը։ Իմ ամբողջ կեանքիս օրերուն մէջ այսպիսի բան լսած չէի բնաւ։

Օլեարիոս. — Այո՛, անոնք բոլոր Ակադեմիային զմայլանքն են։ Գուն առաջին օրը կ'երթաս և կը տեսնես անոնց ամէնէն տարիքոտ և ամէնէն կարողներէն ումանք վարդապետապետական գլխարկը դրած։ Կայսրը մեծապէս գոհ պիտի ըլլայ, երբ անոնց յանձնէ առաջին տեղերը։

Եպիսկոպոս. — Անոնք անվրէպ կը ստանան այդ դիրքերը։

Վանահայր. — Արդեօք կը ճանչնա՞ք օր. երբ տասարդ ազնուական մը Հեսսընէն է։

Օլեարիոս. — Շատ մը Հեսսընցիներ կան։

Վանահայր. — Անունն է... Վայրկեան մը։ Ինչպէս, ձեզմէ և ո՛չ մէկը գիտէ իր անունը։ Անոր մայրը... Ֆոն... Ան, իր հայրը միականի էր, և մարաշախտ։

Լիբերտաւոս. — Ֆոն Վիլհելմսընց։

Վանահայր. — Ճիշտ, Ֆոն Վիլհելմսընց։

Օլեարիոս. — Շատ լաւ կը ճանչնայի զինքը, շատ յատկութիւններով երիտասարդ մը։ Մասնաւորաբար կը գովեն զինքը վիճաբանելու կորովին պատճառով։

Վանահայր. — Ատիկա մօրմէն ունի։

Լիբերտաւոս. — Եւ ատիկա՝ եթէ հաւատանք իր երկան՝ տիկնոջ ամէնէն թերի կողմն էր։

Եպիսկոպոս. — Ի՞նչպէս ըսիք թէ կը կոչուէր կայսրը, որ ձեր օրինագիրքը գրած է.

Օլեարիոս. — Յուստինիանոս։

Եպիսկոպոս. — Փառաւոր մարդ մը։ Իր կենացը։

Օլեարիոս. — Իր յիշատակին։ (Կը խմեն)։

Վանահայր. — Գեղեցիկ գիրք մը պէտք է ըլլայ։

Օլեարիոս. — Ստուգիւ անիկա գիրքերու գիրքն է. բոլոր օրէնքներուն ամբողջական հաւաքածոն. ուր վճիռներ կը գտնենք որ ամէն դիպուածի կը յարմարին, և ատկէ զատ, լըրացնելու համար թերի կէտերը և լուսաւորելու միջոցներ՝ ահագին մեկնութիւններով, որոնցմով ամէնէն իմաստուն մարդիկը զարդարած են այս զարմանալի գործին բնագիրք։

Վանահայր. — Հաւաքածոյ մը՝ բոլոր օրէնքներուն։ Բաբէ՛, ուրեմն տասը պատուիրաններն ալ մէջն են հարկաւ։

Օլեարիոս. — Զօրութեամբ, այո՛, բայց ոչ յայտնապէս։

Վանահայր. — Ես ալ այդպէս ըսել կ'ուզէի,

պարզ ու մաքուր կերպով, առանց ուրիշ բացատրութեան։

Եպիսկոպոս. — Եւ ինչ որ ամենագեղեցիկն է, ինչպէս որ դուք ալ քիչ առաջ կը դիտէիք, կայսրութիւն մը ուր այս օրէնքները ի զօրու ըլլային՝ բացարձակ անգործութիւն պիտի վայելէր։

Օլեարիոս. — Անտարակոյս։

Եպիսկոպոս. — Բոլոր իրաւագէտ դոկտորներուն կենաց։

Օլեարիոս. — Պիտի գիտնամ գովել ատիկա։ (Կը խմեն)։ Տար Աստուած որ իմ հայրենիքիս մէջ ալ այսպէս խօսէին։

Վանահայր. — Ուրեղէն էք, գիտնական դոկտոր։

Օլեարիոս. — Մայնի Ֆրանքֆուրտէն, Զերդ Սրբազնութիւն։

Եպիսկոպոս. — Հոն լաւ չէ՞ք տեսնուած դուք, տեարք։

Օլեարիոս. — Շատ տարօրինակ բան է։ Հոն էի հօրս ժառանգութիւնը գրաւելու. խուժանքի մնաց քարկոճէր զիս, երբ իմացաւ որ իրաւաբան եմ։

Վանահայր. — Աստուած չընէր։

Օլեարիոս. — Բայց տե՛ս թէ ուսկից առաջ կու գայ այդ բանը։ Քաղաքապետականները որ մեծ համբաւ կը վայելեն, բոլորովին անգէտ են հոռմէական օրէնքին։ Կը կարծեն տարիքով և փորձառութեամբ ձեռք բերուած ծանօթութիւն մը՝ քաղաքին ներքին և արտաքին վիճակի մասին՝ բաւական է։ Յետոյ անոր մասին եղած դատաստանները հին բարքերու և հազիւ քանի մը սահմանադրութիւններու համեմատ։

Վանահայր. — Շատ լաւ է ատիկա։

Օլեարիոս. — Բայց երբեք բաւական չէ։ Մարդկային կեանքը կարճ է, և մէկ սերունդի մէջ բոլոր դէպքերը չեն ներկայանար։ Արդ, մեր օրինագիրքը հաւաքածոյ մըն է դիպուածներու որ շատ դարերու ընթացքին հանդիպած են։ Ու յետոյ մարդուս կամքը տկար է, իր կարծիքը ենթակայ փոփոխութեան. այսօր մէկը կը վաւերացնէ այն՝ ինչ որ ուրիշ մը զայն դատապարտեր էր։ Ու այսպէս սխալը և անիրաւութիւնը անխուսափելի են։ Մինչդեռ մենք այս ամէն բաներուն համար դրական օրէնքներ ունինք, որոնք անփոփոխ են։

Վանահայր. — Ատիկա հարկաւ աւելի լաւ է։

Օլեարիոս. — Եւ սակայն այդ է որ ժողովուրդը չ'ուզեր ըմբռնել։ Որքան ալ սիրահար

ըլլայ նորութեանց, սակայն կը զարհուրի ամէն բանէ որ կը ձգտի զինք իր հինցած կոյր սովորութիւններէն ետ դարձնել։ Իրաւագէտը իրենց աչքին՝ խանգարիչ մըն է պետութեան, քսակահատ մը. և կը սկսին կատաղի երբ այդպիսի մէկը գայ իրենց մէջ հաստատուելու։

Լիբերտաւոս. — Ֆրանքֆուրտէն էք։ Հոն շատ լաւ ճանչցուած եմ։ Մաքսիմիլիան կայսրին թագադրութեան ակոյա կոտորելու բաւական բան տուինք ձեր խօսեցեալներուն։ Զեր անունը Օլեարիոս է։ Ես այս անունով մէկը չեմ ճանչնար հոն։

Օլեարիոս. — Հայրս Լօւմանն կը կոչուէր։ Բայց որպէս զի վերնայ այն անյարմարութիւնը որ այս անունը պիտի պատճառէր իմ լատիներէն գրքերուս ճակտին՝ թողի զայն՝ երեւելի ուսուցչապետներու օրինակին և խրատին հետեւելով, և առի Օլեարիոս։

Լիբերտաւոս. — Լաւ ըրիք որ մեկնութիւնը տուիք. մարգարէն արժէք չունի իր հայրենիքին մէջ։ Գուցէ ձեր մայրենի լեզուին մէջ ալ նոյն ճակատագիրը վիճակէր։

Օլեարիոս. — Պատճառը ատոր մէջ չէր։

Լիբերտաւոս. — Ամէն ոք մէկէ աւելի պատճառներ կ'ունենայ։

Վանահայր. — Մարգարէն արժէք չունի իր հայրենիքին մէջ։

Լիբերտաւոս. — Գիտէ՞ք թէ ինչու համար, գերյարգելի տէր։

Վանահայր. — Որովհետեւ հոն ծնած ու մեծցած է։

Լիբերտաւոս. — Անշուշտ, ատիկա մէկ պատճառը կրնայ ըլլալ։ Միւսն այս է. փառքի և սրբութեան լուսապսակը որ հեռուէն զիտողներուն աչքին կը փայլի այս պարտններուն զլխուն վրայ, երբ մօտէն դիտենք՝ կը ցնդին. և այն ատեն անոնք փոքրիկ քուրջի կտորներ կը դառնան։

Օլեարիոս. — Կ'երեւայ որ պաշտօն ունիք ճըշմարտութիւններ ըսելու։

Լիբերտաւոս. — Քանի որ արիութիւն ունիմ զանոնք ըսելու, բառեր չեն պակսիր ինձ գանոնք բացատրելու։

Օլեարիոս. — Բայց հնարաւորութիւն ունի՞ք զանոնք լաւ տեղը դնելու։

Լիբերտաւոս. — Ամէն տեղ ուր տգրուկները կը ծծեն՝ լաւ դրուած են։

Օլեարիոս. — Բաղնեպանները զոգնոցէն կը ճանչցուն և արուեստն ալ իր յաջողութիւն

ներէն. նախագործութեան համար լաւ կ'ընէիք, եթէ բոժոժներ անցնէիք ձեր գլխանոցին: Լիբերալառնո. — Ո՛ր առիթ ձեր աստիճանները: Այս բանը ձեզի կը հարցնեմ որովհետեւ այն պարագային որ միտքս դնեմ բժշկութեան հետեւիլ, պիտի ուզեմ ճանչնալ ճշմարիտ հնոցը:

Օրհարիւռն. — Այն անտանելի կը դառնար... Լիբերալառնո. — Իսկ դուք շատ տանելի և կարեւոր մարդ...

(Եպիսկոպոս և վանահայր կը խնդան)

Եպիսկոպոս. — Ուրիշ բանի մասին խօսեցէք: Շատ մի՛ տաքնաք, պարոններ: Ճաշի վրայ ամէն բան կը կարգադրուի: Ուրիշ նիւթի մը անցէք, Լիբերալառնո:

Լիբերալառնո. — Ֆրանսիոյ մօտ փոքրիկ տեղ մը կայ որ Սաքսոնիայի կը կոչուի:

Օրհարիւռն (Եպիսկոպոսին). — Սրբազան Տէր, Թուրքերու դէմ զրկուած արշաւանքի մասին ի՞նչ լուր կայ:

Եպիսկոպոս. — Կայսրը նախ, որպէս կարեւորագոյն գործ, կայսրութիւնը պէտք է հանդարտեցնէ, ներքին անհամաձայնութիւնները վերցնէ և դատարաններու համբաւը ուժեղացնէ: Յետոյ, կ'ըսեն, անձնապէս պիտի երթայ կայսրութեան և քրիստոնէութեան թըշնամիներուն դէմ: Ներկայիս անձնական կոխուներ դեռ կը զբաղցնեն զինքը, և պետութիւնը, հակառակ քառասունամեայ հաշտութեան, դեռ միշտ մարդասպաններու վիճ մըն է: Ֆրանքոնիա, Շուարէն, Վերին Հունսը և չըջալայ երկիրները քանի մը յաջողկոտ և յանդուգն ասպետներու ձեռքն ինկած են: Սիփինզըն, Սելեից կաղը, Բերլինզըն՝ յայտնապէս կ'արհամարհեն այս տեղերուն մէջ կայսեր վեհափառութիւնը:

Վանահայր. — Ինչպէս, եթէ Նորին Վեհափառութիւնը ատանկ բաներու չխառնուի, այդ ստահակները որ մը պիտի գան և զմեզ ալ տոպրակը պիտի խոթեն:

Լիբերալառնո. — Աջաբաց ստահակ մը ըլլալու է ան, որ Ֆուլդայի գինիի տակառը տոպրակի մը մէջ խոթել ուզէ:

Եպիսկոպոս. — Բերլինզըն շատ տարիներէ ի վեր անհաշտ թշնամիս է և չեմ կրնար ըսել թէ ինչպէս օրերս կը դառնացնէ. բայց կը յուսամ թէ շուտով պիտի ազատիմ անկէ: Կայսրը ներկայիս ժողով ունի Հապսպուրկ: Պէտք եղած միջոցներն արդէն ձեռք առած ենք. ան չի կրնար փախչիլ: Պարոն դոկտոր, կը ճանչնա՞ք Ադրբեյթա Ֆոն Վայզլինզըն:

Ենք. ան չի կրնար փախչիլ: Պարոն դոկտոր, կը ճանչնա՞ք Ադրբեյթա Ֆոն Վայզլինզըն: Օրհարիւռն. — Ո՛չ, Ձերդ Սրբազանութիւն:

Եպիսկոպոս. — Եթէ այդ մարդուն գալստեան սպասէք, պիտի գոհ ըլլաք՝ աշխարհիս ամէնէն ազնիւ, ճարտար և ամենահաճոյալի ասպետը տեսնելով:

Օրհարիւռն. — Հրաշալի մարդ մը ըլլալու է, որ այսպիսի բերնէ մը այսպիսի դրուագներ կը ստանայ:

Լիբերալառնո. — Ո՛չ մէկ համալսարան յաճախած է:

Եպիսկոպոս. — Ատիկա գիտենք: (Ծառաները պատուհանին առջեւ կը վազեն) Ի՞նչ կայ:

Ծառայ մը. — Ճիշտ հիմա Ֆերբըր, Վայզլինզընի զինուորներէն մէկը, զոգեակին դռնէն ներս կը ձիավարէ:

Եպիսկոպոս. — Տեսէք թէ ի՞նչ կը բերէ. անշուշտ ասպետին գալստեան լուրը: (Լիբերալառնո և Կ'երթայ: Ամէնքը ոտքի կ'ելլեն և բաժակ մ'ալ կը պարպեն: Լիբերալառնո ներս կը մտնէ):

Եպիսկոպոս. — Էհ ուրեմն, ի՞նչ լուր:

Լիբերալառնո. — Կը փափաքէի որ ուրիշ մը ըսէր ատիկա Ձեզի: Վայզլինզըն գերի բռնուած է:

Եպիսկոպոս. — Ո՛հ...

Լիբերալառնո. — Բերլինզըն զինքը և երեք զինուորներ Հազլախի մօտ բռնեց է: Անոնցմէ մին փախած է այս լուրը Ձեզի բերելու համար:

Վանահայր. — Անիծեալ լուր:

Օրհարիւռն. — Յաւը հոգիս կը թափանցէ:

Եպիսկոպոս. — Կ'ուզեմ զինուորը տեսնել. վերբերէք զինքը: Պէտք է խօսիմ հետը: Սենեակս բերէք: (Կը մեկնի)

Վանահայր. (Նորէն սեղան կը նստի). — Բաժակ մըն ալ:

(Ծառաները կը լեցնեն)

Օրհարիւռն. — Ձի՞ փափաքիր Ձեր գերարգուծիւնը պարտէզին մէջ փոքրիկ պտոյտ մը ընել: Ճաշէն վերջ կեցիր կանգուն, կամ հազար քայլ շրջէ հեռուն:

Լիբերալառնո. — Իրաւ, նստիլը ձեզի համար առողջարար չէ: Կաթուած կը ստանաք:

Վանահայր (ոտքի կ'ելլէ):

Լիբերալառնո (ինքնիւրեմ). — Մէյ մը որ քեզ դուրս հանեմ, պէտք եղած դասը պիտի տամ քեզի:

(Կը մեկնին)

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
ՎԵՆԵՏԿՈՅ ՄԻԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆԷՆ

Հ. ԴԱՆԻԷԼ Վ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ
ՀԱՅ. - ԳԱՂՂԻԵՐԷՆ

ԳԵՂԵՅԻԿ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Երկսիւմ, ամենամօն րառամթերքով,
և զաղղիակամ ոճերով լաւագոյնը որ լոյս տեսած
ըլլայ ցարդ

(ԳԻՆ՝ ՖՐ. Զ. 3)

Հայ տաղանդաւոր և սիրուած քերթող

ԹՈՎԱՍԹԵՐԶԵԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆՅ ՀԱՒԱՔԱԾՈՆ

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐ

մեծադիր եւ շքեղ տպագրութիւն

Ջեղչուած գին, կամիսիկ, ճամապարձախսով

ԻՏԱԼԻԱ՝ Տոլար 2.86 — ԱՐՄԱՍԱՆՍԻՆ՝ Տոլար 3.12

կը վաճառուի միայն Ս. Ղազարու տպարանէն

ՕՐԱՑՈՅՑ ԵՒ ԳՈՒՇԱԿ ՕԴՈՑ

ՆԱԶԱՆՁ ԹՈՒԱԿԱՆԻՆ

1932

ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ

ԳՐԻՍՏՈՍԻ

ՈՅՁԱ - ՈՅՁԲ

(ՃՁԶ - 176րդ տարի) — Գին՝ թղթակազմ ֆր. Զ. 0.50

ՀԱՅԿԱԿԱՆ

ԳՐԱԾՄԱՆԵՐ

100 ՀԱՏԸ

5 ֆր.

Հ. ՍԻՄԵՈՆ ԵՐԵՄԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԴԷՄՔԵՐ
ԳՐԱԳԷՏ ՀԱՅԵՐ

ԻՆՆԵՐՈՐԳ ՇԱՐՔ

*** (ԳԻՆ՝ ՖՐ. Զ. 3) ***

Հ. ԱՆԱՆԻԱ ԳՈՆՏԱՔՃԵԱՆ

ՆՈՐ ԸՆԹԵՐՅԱՐԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ
ԳՊՐՈՑԱՅ ՀԱՄԱՐ

ԱՅԳԵՍՏԱՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Բ. Տպագրութիւն

(ԳԻՆ՝ ՖՐ. Զ. 1)

ԸՆԴ ՄԱՍԼՈՎ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ

Հ. Գ. ՋԱՐՔԱՆԱԼԵԱՆԻ

Ա. Զ. Դ.

Տպարանս կը ստանձնէ ամէն տեսակ հրատարակութիւն Հայ և Եւրոպական լեզուներով, ինչպէս նաեւ՝ Վաճառականական թուղթեր, Նամականի, Նամականի, Քարտեր՝ ԳՈՒՆԱՏԻՊ և պարզ, Այցետուներ, Պիտակներ, և այլն: Անթերի տպագրութիւն և մատչելի գիներ:

Դիմել՝
Imprimerie Arménienne

St. Lazare

VENISE

(Italie)

ԼԱԻԱԳՈՅՆ ԿԱՂԱՆԴՉԻՔԸ

Թանկարժէք և արդիւնաշատ կազմակերպութիւն մը եթէ կը փափաքէք ընել ձեր մէկ բարեկամին և կամ ձեր զաւկին, տարեկան «ՎԱՍՏԱԿ»-ի բաժանորդագրութիւն մը նուիրեցէք, որպէս զի ամբողջ տարուան ընթացքին տեղեակ մնայ միշտ, ընդհ. աշխարհի առեւտրական, անասնական և կենսական իրադարձութեանց:

Բաժնեկին 50 թիւի համար՝

Թուրքիա 500 Դր.

Արտասահման 60 ֆր. ֆրանս. կամ 2.50 Տոլար

Հասցէ՝ «VASTAK» Revue Commerciale

B. P. 393, Yeni-Cami

Istanbul (Turquie)

